**Արձանագրություն N 2**

<<ՀԱԷԿ -ՇՀԱՊՁԲ-15/3>> ծածկագրով կայանի կարիքների համար **<<Գրենական պիտույքների և նյութերի>>** գնման գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Մեծամոր 23 դեկտեմբերի 2015թ.

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ Վ. Արշակյանը,
Հանձնաժողովի անդամներ Ա. Օրդուբեկյանը,
Հանձնաժողովի քարտուղար Ա. Ղազարյանը,
Նիստին չէր մասնակցում հանձնաժողովի անդամ Գ. Մարգարյանը

1. **<<ՀԱԷԿ -ՇՀԱՊՁԲ-15/3>> ծածկագրով ընթացակարգի հայտերի բացման մասին**

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց <<ՀԱԷԿ -ՇՀԱՊՁԲ-15/3>> ծածկագրով <<Գրենական պիտույքների և նյութերի>> գնման ընդհանուր (նախահաշվային) գինը՝ մեկ թվով արտահայտված՝ 3 520 000 (երեք միլիոն հինգ հարյուր քսան հազար) ՀՀ դրամ: Հանձնաժողովի քարտուղարը տեղեկատվություն հաղորդեց գրանցամատյանում կատարված գրառումների մասին և հանձնաժողովի նախագահին փոխանցեց հայտի գրանցամատյանը, դրա անբաժանելի մաս հանդիսացող մյուս փաստաթղթերը և գրանցված հայտը:

ա. Ընդունել ի գիտություն, որ ընթացակարգի հայտ է ներկայացրել .

1.1 <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ, ք. Երևան, Մ. Մաշտոցի պող. 2 շենք թիվ 60 տարածք, հեռ. 010-58-60-60 ընդհանուր արժեքով 600 000 (վեց հարյուր հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

2. Ուսումնասիրելով մասնակցի ներկայացրած ծրարը և փաթեթում գտնվող փաստաթղթերը (կցվում են), հանձնաժողովը եզրակացրեց, որ՝

<<Նորմա-պլյուս>> ՍՊԸ-ի ներկայացրած՝

ա/ հայտ պարունակող ծրարը կազմված և ներկայացված է հրավերի պահանջներին համապատասխան,

բ/ հայտում առկա փաստաթղթերը ներկայացված են հրավերով սահմանված վավերապայմաններին համապատասխան:

Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

3. **Ներկայացվեց մասնակցի ներկայացրած գնային առաջարկը, առանց ԱԱՀ-ի՝**

| Չ/Դ | Ապրանքի անվանումը | <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ |
|---|---|---|
| 1 | *Դիագրամ* | 500 000 (հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ |

ՈՒսումնասիրելով մասնակցի գնային առաջարկը, հանձնաժողովը որոշեց՝

Ուսումնասիրելով մասնակցի գնային առաջարկը, հանձնաժողովը որոշեց՝

թիվ 1 չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ-ին, որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

4. Հանձնարարվեց հանձնաժողովի քարտուղարին էլեկտրոնային եղանակով ծանուցել.
ա ) որ ընթացակարգի թիվ 1 չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի՝ <<Նորմա-պլյուս>> ՍՊԸ-ի ներկայացրած գնային առաջարկը ցածր է տվյալ գնման հայտով նախատեսված առավելագույն գնի 75 տոկոսից, այսինքն՝ մասնակիցը ներկայացրել է չհիմնավորված ցածր գնային առաջարկ, հանձնաժողովը որոշեց մասնակցին տալ հնարավորություն աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել լրացուցիչ հիմնավորումներ:
Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթային հիմնավորումները չներկայացվելու կամ ներկայացված հիմնավորումները գնահատող հանձնաժողովի կողմից ոչ բավարար համարվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

բ) առաջին տեղը զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ սույն հրավերի 2-րդ մասի հայտ պատրաստելու հրահանգի 3-րդ բաժնով, ինչպես նաև սույն հրավերի 1-ին մասի 4.3 կետի <<գ>> ենթակետով նախատեսված փաստաթղթերը: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթերը չներկայացվելու դեպքում հանձնաժողովը մերժում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդող տեղը զբաղեցրած մասնակցին:

5. Հանձնարարվեց հանձնաժողովի քարտուղարին էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում ներկայացնել առաջին և երկրորդ տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև սույն հրավերի 2.3 կետի <<Ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը

Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

6. Փաստաթղթերի գնահատման արդյունքների հաստատման նիստը հրավիրել ոչ ուշ, քան 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերի պատճենները, գնահատման թերթիկների երկու օրինակները և ՀՀ Ֆինանսների նախարարությունից ստացած եզրակացությունը հանձնաժողովի անդամներին տրամադրելու հաջորդող աշխատանքային օրը, ժամը 15-00-ը, ՀՀ Արմավիրի մարզ, ք. Մեծամոր <<ՀԱԷԿ>> ՓԲԸ վարչական շենք հասցեում:

Ընդունվեց որոշում՝ կողմ-3, դեմ-0:

| | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | [signature] | Վ. Արշակյան |
| անդամներ | [signature] | Ա. Օրդուբեկյան |
| Քարտուղար՝ | [signature] | Ա. Ղազարյան |